XI

Ասել է ուրեմն՝ Անդրկովկասեան Հայաստանի կէսից աւելին ներկայիս օտար գրաւման տակ է գտնւում, որի կէսը քեմալական Թուրքիոյ ձեռին: Այդ ամէնը միասին անում է 43,550 քառ. քիլոմէթր տարածութիւն: Եթէ այս վերջին թիւը աւելացնելու լինենք Հայաստանի ներկայ տարածութեանը (30,980 քառ. քմ.) ներկայացնող թուի վրայ, կը ստանանք ուրեմն շուրջ 74 հազար քառ. քիլոմէթր: Հայկական քաղաքական-պետական պահանջները ուրեմն, մօտաւորապէս այս տարածութեան շուրջն են պտտում:

Ինչ վերաբերում է ազգաբնակութեան այն թուին, որ բաժին է ընկնում օտար գրաւման ենթակայ հայկական վերոյիշեալ շրջաններին, նա ներկայացնում է հետեւեալ մօտաւոր պատկերը: Ա. Քեմալական Թուրքիային ենթակայ շրջանների — Կարսի նահանգ եւ Սուրմալուի գաւառ — հայ, յոյն, ռուս եւ միւս քրիստոնեայ տարրերը կամ հեռացել են այնտեղից եւ կամ բնաջնջուել: Որով, եթէ մինչեւ իսկ ընդունելու լինենք թէ մահմեդական տարրը մարդկային կորուստներ բնաւ չէ ունեցել, յետոյ նկատի ունենալով նաեւ այն, որ նախապէս Կարսի նահանգի մէջ մտնող Աղբաբայի գրեթէ զուտ մահմեդական գաւառամասը 1920-ից յետոյ էլ Հայաստանի մաս է կազմում, պիտի տեսնենք, ուրեմն, որ Կարսի նահանգի մէջ ապրող, 1914-ի հաշուով, 166 հազար մահմեդականներից մնացել են ոչ աւելի քան 150-155 հազար:

Տաճկական վերջին մարդահամարին (1927 հոկտ.) նայելով՝ Կարսի «վիլայէթը» ներկայիս հաշւում է 205,464 բնակիչ: Այստեղ, ինչպէս նաեւ առահասարակ Տաճկաստանի ողջ ազգաբնակութեան խնդրում, եղածից աւելին ցոյց տալու քաղաքական միտումը ակներեւ է: Մի բան, որ եւրոպացի դիտողների աչքից եւս չխուսափեց: Եւ սակայն նկատի ունենալով որ մահմեդական ներգաղթ կարող է տեղի ունեցած լինել վերջին տարիների ընթացքում, 160-170 հազարը ճշմարտութեան մօտ պիտի համարել, ինչ որ Կարսի «վիլայէթին» է վերաբերում: Ապա, ընդունելով նաեւ այն, որ ենթադրաբար Սուրմալուի մահմեդական բնակչութիւնն եւս ներկայիս մօտաւորապէս հաւասար պիտի լինի 1914-ի իրական վիճակին — 57 հազար, ենթադրելով որ մահմեդականների կորուստները փոխարինուել են ներգաղթով (Սուրմալուն ներկայիս Հին Բայազէտի հետ միասին վարչական առանձին միաւոր է, նորէն մի «վիլայէթ», որ վերջին մարդահամարին նայելով, 103,062 բնակիչ ունի),— ապա ուրեմն կը ստանանք 220-ից 230 հազարի հասնող մի թիւ: Ուրիշ խօսքով՝ Թուրքիան Անդրկովկասեան Հայաստանից դրաւելով շուրջ 21 հազար քառակուսի քիլոմէթր տարածութիւն ներկայացնող մի երկրամաս (20,950 քառ. քմ.) նրանից խլել է նաեւ 230 հազարի հասնող բնակչութիւն:

Ատրբէջանը, տեսանք, գրաւել է Հայաստանից 17,600 քառ. քմ. տարածութիւն: Իսկ ո՞րքան բնակչութիւն, դարձեալ, ի հարկէ, 1914-ի հաշիւներով: (Դրանք զգալի փոփոխութեանց ենթարկուեցին յետագայ տարիներում): Նախիջեւանի գաւառը 1914-ին ունէր (կլոր հաշուով) 81 հազար մահմեդական եւ 53 հազար հայ ազգաբնակութիւն (ուրիշ տարրեր գրեթէ չկային արդէն):

Յետագային այդ երկու թուերն էլ կոտորակուեցին ծանօթ պատճառներով: Նոյնը նաեւ բուն Շարուրի մասին, որ 1914-ին (Դարալագեազի հետ միասին) ունէր 58 հազար մահմեդական եւ 26 հազար հայ ազգաբնակութիւն: Շարուրը եւ Նախիջեւանը այժմ միասին վարչական առանձին միաւոր են կազմում, «Նախկրայ ինքնավար հանրապետութիւնը», ենթակայ Ատրբէջանին: Ներկայիս նրանք երկուսը միասին հաշւում են հաղիւ 80 հազ. բնակչութիւն (որից հայ՝ 6-7 հազար):

Ինչ վերաբերում է «Լեռնային Ղարաբաղին», «Քիւրդ-Կրային» եւ Լեռնային Գանձակին, ուրիշ խօսքով՝ 1916-ին նախագծուած զեմստվոյին հայկական «Գանձակի նահանգին» առանց Իջեւանի շրջանի եւ Զանգեզուրի մեծ մասի, որոնք Հայաստանի մաս են կազմում, այդտեղ էլ, նախապատերազմեան հաշուով, ապրում էր 270-290 հազարի հասնող բնակչութիւն, որի ⅔-ը՝ հայ: Հայկական (Լեռնային) Գանձակը, որ առաջ հաշւում էր 114 հազար բնակիչ (հայ՝ 67 հազար), այժմ